

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կարեն Արմոյի Ներսիսյան

Հոդվածը ստացվել է՝ 14.02.24, ուղարկվել է գրախոսման՝ 10.04.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

Ներածություն: Արդի ժամանակներում հայկական ընկերությունների զգալի մասը գտնվում են գոյության դժվարին պայմաններում. Հնկերությունների կառավարման մարմինները և ղեկավարները հանգամանորեն վեր են լուծում իրենց գործունեության իրականացման վերջնարդյունքները, համեմատելով կատարված ծախսերն ու ստացված արդյունքները: Դա անհրաժեշտ է ընկերության ներսում տեղի ունեցող գործընթացները վերահսկելու, փոփոխություններին տեղյակ լինելու, ավելորդ ծախսերը, տուգանքները, տույժերը կանխելու համար, որոնք կարող են վատթարացնել ընկերության ֆինանսական վիճակը: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր ժամանակակից կազմակերպությունում, անկախ սեփականության ձևից, իրականացվում է դրամական հոսքերի կառավարում:

ՀՀ տնտեսության ներքին միջավայրի բարձր դինամիզմի և զլոբալ տնտեսության վերջին զարգացումները, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների վճարունակության ապահովման և ֆինանսական կայունության պահպանման գործում առկա ներկայումս դրսևորվող օբյեկտիվ դժվարությունների պայմաններում կարևորվում է միկրոմակարդակում դրամական միջոցների հոսքերի հավասարակշռության հասնելու, այդ համակարգի կառավարման որակի բարելավման խնդիրների բացահայտումը և այդ հիման վրա գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը ու ներդրումը տնտեսության իրական հատվածում:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ՀՀ արտադրական կազմակերպություններում դրամական հոսքերի կայունության ապահովման արդի հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները, որի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել և ներկայացնել դրամական հոսքերի վերլուծության վերաբերյալ տեսական դրույթները,

- բացահայտել ՀՀ արտադրական կազմակերպություններում դրամական միջոցների անարդյունավետ կառավարման հիմնական պատճառները,

- ներկայացնել առաջարկություններ արտադրական կազմակերպությունների դրամական միջոցների կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Գրականության վերլուծություն: Նախևառաջ հարկ է նշել, որ ընկերության դրամական միջոցների հոսքերի կառավարումը իրենից ներկայացնում է ընկերության մանրակրկիտ մշակված ֆինանսական քաղաքականության իրականացում, ուղղված ընկերության ֆինանսական արդյունքների պլանավորման և վերահսկողության ու ընկերության ֆինանսական վիճակի բարելավմանը¹:

Չնայած այն հանգամանքին, որ ընկերության դրամական հոսքերի կառավարման գործիքակազմի մշակման մակարդակը մեր օրերում հասել է բավականին բարձր մակարդակի, այնուամենայնիվ, շատ մենեջերներ մինչ օրս այս ոլորտում բախվում են որոշ հիմնախնդիրների: Դրանց ինչպես տեսական, այնպես էլ գործնական, տարբեր ասպեկտների ուսումնասիրության արդյունքների հիման վրա, տարբեր հեղինակներ առանձնացնում են մի շարք խնդիրներ, որոնք արդիական են հայկական ընկերությունների մեծ մասի համար, մասնավորապես՝ կանխիկ միջոցների անբավարարություն, դրանց ձևավորման սեփական աղբյուրների առկայության և բացակայության հիմնախնդիրներ և այլն:

Հետևաբար, ցանկացած հասարակության տնտեսական բարեկեցությունն ուղղակիորեն կախված է կոնկրետ կազմակերպության ֆինանսական կայունությունից:

Իսկ կազմակերպության ֆինանսական կայունության հիմնական գործոնը ընկերության դրամական հոսքերը կառավարելու ունակությունն է:

Դրամական միջոցները բավականաչափ սահմանափակ ռեսուրսներ են, հետևաբար ընկերության կառավարման գործընթացում կարևոր է ստեղծել դրանց կառավարման գործող մեխանիզմ²:

Կազմակերպությունում տնտեսական գործունեության ժամանակ տեղի է ունենում դրամական միջոցների ստացման, ծախսման և շարժի մշտական գործընթաց, որը կոչվում է դրամական միջոցների հոսք:

Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր կազմակերպության դրամական միջոցների հոսքերի կառավարման հիմնական խնդիրն է պահպանել կանխիկ ռեսուրսների նվազագույն թույլատրելի մնացորդը՝ ապահովելով դրանց ստացման և ծախսման հավասարակշռությունը: Հատկապես մրցակցային և շատ անկայուն իրավիճակում անհրաժեշտ է արագ արձագանքել շուկայական իրավիճակից բխող շեղումներին:

Հայրենական և արտասահմանյան բազմաթիվ տնտեսագետների աշխատանքները նվիրված են դրամական միջոցների հոսքերի տեսական ասպեկտների ուսումնասիրությանը: Միննույն ժամանակ, մասնագիտական գրականության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում միայն ընկերության դրամական հոսքերի կարգավորման ուսումնասիրությանը, որպես ինքնուրույն օբյեկտի

¹ Цукурова, А., Управление денежными потоками организации, Политика, экономика и инновации, 2022, № 2 (25), ст. 2–12

² Скоркина С., Развитие методики анализа денежных средств организации на основании данных бухгалтерской отчетности и учетной политики, Наукосфера, 2020, № 2, ст. 10–14

անհրաժեշտ չափով չխորանալով դրանց վերլուծության մեջ: Այս հանգամանքը հանգեցնում է արտադրական կազմակերպության կողմից հաշվառման-վերլուծական տեղեկատվության կազմելու հետ կապված դժվարությունների:

Այսպես Ի. Բլանկը գտնում է, որ «ընկերության դրամական միջոցների հոսքը դրամական արկղերի շարժն է, որը ձգվում է դեպի գրո, քանի որ ընկերության տնտեսական գործունեության տեսակներից մեկի բացասական արդյունքը պետք է փոխհատուցվի մեկ այլ գործունեության դրական ազդեցությամբ: Հետևաբար, դրամական միջոցների հոսքը պետք է լինի դրական և բացասական: Հակառակ դեպքում ընկերությունը սնանկ կդառնա»¹:

Ա.Ա. Կորոլկովան. պնդում է, որ «դրամական հոսքի հասկացությունը ագրեգացված է և ներառում է տարբեր տեսակի հոսքեր, որոնք սպասարկում են ձեռնարկության ֆինանսատնտեսական գործունեությունը»²:

Ա.Գ. Կեմենովը համարում է, որ «դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են ընկերության ֆինանսական կայունացման ներքին աղբյուր՝ դրա մուտքերի ավելացման և ելքային դրամական հոսքերի նվազման պատճառով, որոնք ուղղվում են վճարունակության աճին»³:

Դրամական հոսքերի կանխատեսումը առավել պակաս ուսումնասիրված խնդիրներից մեկն է⁴:

Անդրադառնալով դրամական հոսքերի կառավարման գործընթացի փուլերին Հ. Ստեփանյանը նշում է, որ օպտիմալացման վերջնական փուլ է հանդիսանում կազմակերպության զուտ դրամական հոսքերի մաքսիմալացման պայմանների ապահովումը, վերջինիս աճը ապահովում է կազմակերպության ինքնաֆինանսավորման բարձր մակարդակ՝ կրճատելով ֆինանսավորման արտաքին աղբյուրներից կախվածությունը⁵:

Չնայած դրամական միջոցների հոսքերի կառավարման հետ կապված հաշվապահական հաշվառման, վերլուծական և կառավարման խնդիրներին նվիրված հրապարակումների մեծ թվին, դեռևս կան մի շարք չլուծված տեսական և գործնական խնդիրներ, որոնք պահանջում են խորը և համապարփակ գիտական հիմնավորում՝ կառուցված համակարգված մոտեցման վրա, ուղղված կազմակերպությունների դրամական ակտիվների կառավարման կատարելագործմանը: Ուստի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել կազ-

¹ Бланк И., Управление денежными потоками, Москва, Дело и Сервис, 2021, 736 с.


² Королькова А., Денежные потоки как фактор обеспечения финансовой стабильности организации, Ученые записки Тамбовского отделения РоСМУ, 2020, № 15, ст. 47–56

³ Кеменов А., Управление денежными потоками организации. Монография, Москва, ЮНИТИ, 2021, 191 с.

⁴ Աբգարյան Կ., Աբգարյան Կ., «Կորպորատիվ ֆինանսներ», Երևան 2015 թ., 247 էջ

⁵ Ստեփանյան Թ., Կազմակերպության վճարունակության մակարդակի բարելավումը դրամական հոսքերի օպտիմալացման հաշվին, Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության մարզերում: Գիտաժողովի նյութեր.- Եղեգնաձոր: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ: 2015.- էջ 233-240

մակերպության դրամական հոսքերի կառավարման մոտեցումները և դրա տեղեկատվական բազան, ներառյալ հետադարձ և կանխատեսող ցուցանիշները: Բացի այդ, տնտեսության թվայնացման պայմաններում հասունացել է տնտեսական վերլուծության մեթոդների վերանայման և հարմարեցման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով դրանց հավաքագրման, մշակման ժամանակակից տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների հնարավորությունները, ինչպես նաև շահագրգիռ կողմերին և ներքին կառավարման օղակներին վերլուծական տեղեկատվության ժամանակին, բավարար, օրյեկտիվ և հասցեական ներկայացումը:



Գծապատկեր 1. Ֆինանսական տեխնոլոգիաների արդի միտումները¹

Հարկ է նշել, որ հատուկ գիտական գրականության մեջ, ինչպես նաև վերջին տասնամյակների ընթացքում հրապարակված մեթոդական մշակումներում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) ներդրման համատեքստում, հաշվապահական հաշվառման և վերլուծական խնդիրների ոլորտային ասպեկտները ներկայացված են միայն հատվածաբար, իսկ դրամական միջոցների հաշվառման, վերլուծության և կանխատեսման վերաբերյալ հրապարակումները արտադրական կազմակերպությունների հոսքերի մասին եզակի են:

Մեթոդաբանություն: Ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմքը հիմնված է տեղական և արտասահմանյան գիտական մշակումների, ինչպես նաև կարգավորող դրույթների վրա, որոնք նվիրված են դրամական հոսքերի տնտեսական վերլուծության տեղեկատվական բազայի մշակման և գործունեության

¹ Ю.А. Криволапова, Орлова Татьяна Игоревна, Криволапова Юлия Александровна НОВЫЕ ФИНАНСОВЫЕ ТЕХНОЛОГИИ: ГЛОБАЛЬНЫЕ ТРЕНДЫ В РОССИИ ИНДУСТРИАЛЬНАЯ ЭКОНОМИКА № 2, 2023, стр. 65-71

խնդիրներին, կենտրոնացած են բիզնեսի կառավարման համակարգի բարելավման, դրա մրցունակության և արդյունավետության բարձրացման, ձեռնարկության հավանական շուկայական արժեքի գործոնների նույնականացման և գնահատման, ներդրումային գրավչության աճի և ֆինանսական կայունության վրա:

Վերլուծություն: Դրամական հոսքը դրամական միջոցների բոլոր մուտքերի և ծախսերի գումարային ընդհանրական հասկացություն է: Առանձին վերցրված մեկ կազմակերպություն կարող է ունենալ իր ֆինանսա-տնտեսական գործունեությունն արտացոլող մի քանի դրամական հոսքեր:

Դրամական հոսքերի կառավարման հիմնական ուղղությունը մուտքերի և վճարումների հավասարակշռության պահպանումն է, կանխիկի դեֆիցիտ թույլ չտալը, ինչպես նաև հաշվեկշռի օպտիմալացումը դրամական միջոցների հոսքերի սինխրոնացման միջոցով:

Դրամական հոսքի կառավարումը ֆինանսական կառավարման համակարգի ամենակարևոր գործառնական ոլորտներից մեկն է, որը սերտորեն կապված է ընկերության կառավարման այլ համակարգերի հետ և հանդիսանում է կազմակերպության, ռեսուրսների բաշխման և օգտագործման, դրանց շրջանառության կազմակերպման հետ կապված կառավարչական որոշումների մշակման և իրականացման սկզբունքների ու մեթոդների համակարգ:


Դրամական հոսքերի կառավարման կազմակերպման ամենակարևոր և բարդ փուլերն են ընկերության եկամուտների, ծախսերի, ինչպես նաև շահույթի և վնասների օպտիմալացումը և կանխատեսումը:

Դրամական հոսքերի կառավարումը կազմակերպելիս կազմակերպության ղեկավարությունը պետք է հնարավորինս շատ տեղեկատվություն ունենա, քանի որ կազմակերպությունների բոլոր դրամական հոսքերը պետք է հստակ հավասարակշռված լինեն:

Դրանց բաշխման զգալի անհավասարակշռության պատճառով կազմակերպությունում կարող է առաջանալ դրամական միջոցների ժամանակավոր պակաս, ինչը բացասաբար է անդրադառնում ընկերության գործունեության արդյունավետության վրա և կարող է հանգեցնել ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման:

Այդ իսկ պատճառով ընկերության դրամական հոսքերի կառավարման գործընթացում երկարաժամկետ հեռանկարում պետք է ապահովվի բավարար իրացվելիություն:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ դրամական հոսքերը ձևավորվում են կազմակերպության ֆինանսա-տնտեսական գործունեության գործընթացում, հանդիսանում են տնտեսական կառավարման ամենակարևոր օբյեկտը: Դա պայմանավորված է նրանով, որ կազմակերպության գործունեության տեսակները (գործառնական, ներդրումային և ֆինանսական) ազդում են կազմակերպության գործունեության ռազմավարական նպատակների և ընդհանուր ֆինանսական արդյունքի վրա:



Գծապատկեր 2. Հիմնական, ներդրումային և ֆինանսական գործունեության փոխկապվածությունը¹

Պետք է նշել, որ ՀՀ իրական հատվածի կազմակերպությունների դրամական հոսքերի ոչ արդյունավետ կառավարման հիմնական պատճառներն են՝

- ժամանակին տեղեկատվության տրամադրման պակասը;
- մուտքերի և վճարումների համաժամանակայնության բացակայությունը;


¹ Մշակվել է հեղինակի կողմից

- հաճախ կառավարման ձևականությունը գերազանցում է դրամական հոսքերի իրական նպատակադրվածությանը;
- կազմակերպության տարբեր ծառայությունների ֆինանսավորման պահանջների ոչ կապակցվածությունը;
- կազմակերպության իրական ֆինանսական հնարավորությունների նախնական հաշվարկի բացակայությունը;
- պատասխանատու մասնագետների կողմից լիազորությունների չապահովումը:

Դրամական ակտիվների կառավարման պրակտիկան ցույց է տվել, որ դրամական հոսքերի կառավարման գործընթացի ամենաօպտիմալ մոտեցումը դրանց բաժանումն է դրական, բացասական և զուտ հոսքերի՝ ըստ գործունեության գործառնական, ներդրումային և ֆինանսական տեսակների: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ հետևելու կազմակերպության դրամական միջոցների ստացման և ծախսման հիմնական ուղղություններին:

Դրամական միջոցների հոսքերի վերագրումը գործունեության որոշակի խմբին կարգավորվում է ինչպես միջազգային, այնպես էլ ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներով՝ ՀՀՄՄ 7¹:

Արդի պայմաններում հաշվապահական հաշվառման և դրամական հոսքերի կառավարման տեղեկատվական և վերլուծական մեթոդները ավելի են կարևորվում:



Գծապատկեր 3. Դրամական միջոցների հոսքերի կառավարման մոդելները²

¹ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՀՀՄՄ)

² Կազմվել է հեղինակի կողմից

Քննարկելով առավել տարածված մոդելների և մեթոդների համախմբությունը, մեր կարծիքով նախապատվությունը պետք է տալ գծապատկեր 3-ում բերված դասակարգմանը:

Հանգամանորեն չներկայացնելով յուրաքանչյուր մոդելի էությունը, որը առանձին քննարկման թեմա է, նշենք, որ դրանց կիրառման նպատակահարմարությունը կախված է վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի առկայությունից և հասանելիությունից, ինչպես նաև այդ գործընթացի կազմակերպման համար անձանց մասնագիտական կարողություններից:

Մեր կարծիքով, ներկայումս առավել տարածված են մատրիցային, հաշվարկային, վիճակագրական և հավանականային մոդելները: Ընդ որում մոդելների յուրաքանչյուր տեսակ կարող է օգտագործվել ոչ միայն առանձին, այլև համատեղ մյուսների հետ, ինչը հնարավորություն է ընձեռնում բարձրացնել դրամական միջոցների և դրանց համարժեքների շարժի վերաբերյալ գործարքների կայացված ֆինանսական որոշումների հիմնավորվածությունը: Օրինակ, մատրիցային մոդելները թույլ են տալիս ստանալ վճարումների բաշխման ձևը ըստ տեսակների և ժամկետների ու հաստատել միջոցների հնարավոր ներհոսքի բավարարությունը արտահոսքն ապահովելու համար:

Հաշվարկային մոդելները հիմնվելով վճարային հաշվեկշռի վիճակի տարբեր պարամետրերի համեմատության և ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա թույլ են տալիս՝ որոշել որոշումների կայացման հիմնական ուղենիշների շեմերը, օրինակ՝ որոշել գործարքների իրականացման համար կանխիկի օպտիմալ չափը առաջիկա ժամանակահատվածում, ինչպես նաև ժամանակի ընթացքում փողի արժեքը գնահատելու տարբեր տարբերակներ:

Վիճակագրական մեթոդներն օգտագործվում են տվյալների մեծ զանգվածների մշակման համար: Այս մեթոդները կարևոր են, երբ կազմակերպությունն ունի մեծ թվով նույնատեսակ ֆինանսական գործարքներ, և պահանջվում է սահմանել դրանց ընդհանուր պարամետրերն ու հատկությունները:

Բացի այդ, վիճակագրական մեթոդները օգտագործվում են արդյունքային և գործոնային ցուցանիշների միջև կախվածությունները կառուցելու և հնարավոր արժեքները կանխատեսելու համար երկար ժամանակահատվածում (ինտերպոլացիա) կամ մի քանի կարճ ժամանակահատվածներից դուրս (էքստրապոլացիա): Վիճակագրական մոդելների արդյունավետ օգտագործման համար կարևոր պայման է վերլուծության համար բավարար քանակությամբ հավաստի տվյալների առկայությունը: Այս դեպքում պետք է հաշվի առնել, թե որքան տվյալներ են օգտագործվում վիճակագրական մոդելներում:

Կիրառման ամենամեծ դժվարությունը, մեր կարծիքով, հավանականային մոդելներն են: Դրանց օգտագործման որակը կախված է ոչ միայն առկա և հասանելի տվյալներից, այլև փորձագետների որակավորումից, որոնք գնահատում են կազմակերպության դրամական միջոցների հոսքի վրա ազդող գործոնների

դրսևորման հավանականությունը: Այսինքն՝ հավանականային մոդելավորման արդյունքների օգտագործման հուսալիությունը կամ կիրառելիությունը ի համեմատ այլ մոդելների հետ որոշվում է մեծ թվով գործոններով:

Հարկ է ընդգծել, որ հաշվապահական հաշվառման գործառնությունների որակի բարելավման արդյունքում, ներառյալ ՀՀ-ում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների օգտագործումը, կազմակերպության ղեկավարությունը հնարավորություն է ստանում բարելավել դրամական հոսքի հավասարակշռությունը, ինչպես նաև ընտրել լավագույն հարաբերակցությունը կանխիկի և դրանց համարժեքների միջև՝ կախված վճարային ժամանակացույցից, դրանց ծավալից և կառուցվածքից:

Նշենք նաև, որ կազմակերպության դրամական միջոցների հոսքերի կառավարման վերաբերյալ շատ հարցեր կախված են դրանց օրենսդրա-իրավական կարգավորումից:

Վերջին տարիներին ՀՀ-ում որոշակի փոփոխություններ են կատարվել դրամական միջոցների հաշվապահական հաշվառման ոլորտում կարգավորող իրավական ակտերում: Մասնավորապես, փոփոխությունները վերաբերում էին ՀՀ-ում կանխիկ և անկանխիկ դրամական շրջանառության կազմակերպման կարգին, ներառյալ անհատական ձեռնարկության մակարդակում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պահանջները, որոնք արտացոլում են տնտեսվարող սուբյեկտի դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը¹:

Գիտական նորույթ: Թեմայի ուսումնասիրության ընթացքում որպես գիտական առանցքային հարց դուրս է բերվել ՀՀ արտադրական կազմակերպությունների գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության կառավարման համակարգի տեղեկատվական ապահովության որակի բարելավմանն ուղղված տեսական և մեթոդական դրույթների զարգացման ապահովման և դրամական հոսքերի տնտեսական վերլուծության ուղղությամբ գործնական երաշխավորությունների մշակման ու ներդրման կարևորության հիմնավորումը: Որպես գիտական նորույթ՝ հաշվի առնելով ՀՀ արտադրական կազմակերպություններում կիրառվող դրամական հոսքերի կառավարման տարբեր և ոչ ամբողջական մոտեցումը, առաջարկում եմ պետական համապատասխան լիազոր մարմինների կողմից մշակել և գործողության մեջ դնել ընդհանուր մեթոդական ուղեցույց՝ դրամական հոսքերի արդյունավետ կառավարման վերաբերյալ:

Եզրակացություն: Դրամական հոսքերի կառավարման կատարելագործումը կարևոր խնդիր է ՀՀ կազմակերպությունների համար տնտեսական անկայունության և մրցակցության ժամանակակից պայմաններում: Դրամական հոսքերի օպտիմալացումը թույլ է տալիս ապահովել կազմակերպության ֆինանսական կայունությունը և վճարունակությունը: Վերլուծության, կառավարման արդյու-

¹ Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներ, Հավելված ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1848-Ն որոշման, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=137862>

նավետ մեթոդների կիրառման և համապատասխան գործիքների ներդրման միջոցով կազմակերպությունները կարող են հասնել ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, բարելավել դրամական միջոցների հոսքերի պլանավորումը և կանխատեսումը և ապահովել ֆինանսական ցուցանիշների կայունությունը:

Գիտական հոդվածի թեմայի վերաբերյալ մատչելի տեղեկատվական նյութերի և տվյալների ուսումնասիրության արդյունքում կարելի է գալ այն հետևության, որ դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվության ձևավորման և գնահատման մանրամասն և համընդհանուր համակարգ հանրապետությունում դեռևս գոյություն չունի:

Գործնականում, շատ դեպքերում, իրականացվում է դրամական հոսքերի հետադարձ վերլուծություն, իսկ այդ հոսքերի կառավարման իրական արդյունավետության գնահատումը կատարվում է միայն առանձին խոշոր կազմակերպություններում:

Ընդհանուր կազմակերպության և դրա կառուցվածքային ստորաբաժանումների դրամական հոսքերի կառավարման համակարգի հաշվապահական հաշվառման և վերլուծական միասնական մեթոդաբանության բացակայությունը գործնականում հանգեցնում է ֆինանսական ռեսուրսների ներհոսքերի և արտահոսքերի անհավասարակշռության և ոչ սինխրոնության, ինչը բացասաբար է անդրադառնում ընդհանուր բիզնես գործունեության վրա:

Հետևաբար, կազմակերպության դրամական հոսքի կառավարման բոլոր ասպեկտների հաշվապահական հաշվառման և վերլուծական աջակցության արդյունավետ մեթոդաբանության մշակումը ՀՀ-ում արդիական է և գործնականում պահանջված:

Թվային տնտեսության և ֆինանսական տեխնոլոգիաների ՀՀ-ում ներդրման ներկայիս պայմաններում հրատապություն է ձեռք բերում դրամական հոսքերի կառավարման նոր համակարգի ու մոտեցումների մշակման ու կիրառման հիմնահարցերի բացահայտումն ու լուծումը, հատկապես վերլուծական տվյալների արժանահավատության ու ճշտության ապահովման, ինչպես նաև ֆինանսահաշվային ոլորտի օրենսդրա-իրավական կարգավորման արդի պահանջների ու մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անկանխիկ գործառնությունների մասին (08.02.2022 ՀՕ-12-Ն), «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին (29.06.2022 ՀՕ-269-Ն)
<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=8199&lang=arm>
2. «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (01.03.2024 ՀՕ-81-Ն),
<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=9122&lang=arm>

3. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (20.11.2023 ՀՕ-340-Ն), <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=8941&lang=arm>
4. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՀՀՄՍ) <https://caaa.am/gradaran/hashvapahuthyun/hhms-1/>
5. Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներ, Հավելված ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1848-Ն որոշման, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=137862>
6. Ստեփանյան Թ., Կազմակերպության վճարունակության մակարդակի բարելավումը դրամական հոսքերի օպտիմալացման հաշվին, Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության մարզերում: Գիտաժողովի նյութեր.- Եղեգնաձոր: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ: 2015.- էջ 233-240
7. Արգարյան Կ., Արգարյան Կ., Կորպորատիվ ֆինանսներ, Երևան, 2015, 247 ս.
8. Бланк И., Управление денежными потоками, Москва, Дело и Сервис, 2021, 736 с.
9. Кеменов А., Управление денежными потоками организации, Монография, Москва, ЮНИТИ, 2021, 191 с.
10. Королькова А., Денежные потоки как фактор обеспечения финансовой стабильности организации, Ученые записки Тамбовского отделения РoCMY, 2020, № 15, ст. 47–56.
11. Криволапова Ю., Орлова Т., Криволапова Ю., Новые финансовые технологии: глобальные тренды в россии индустриальная экономика, № 2, 2023, ст. 65-71
12. Скоркина С., Развитие методики анализа денежных средств организации на основании данных бухгалтерской отчетности и учетной политики, Наукосфера, 2020, № 2, ст. 10–14.
13. Цукурова А., Управление денежными потоками организации, Политика, экономика и инновации, 2022, № 2 (25), ст. 2–12.

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կարեն Արմոյի Ներսիսյան

Համառոտագիր: Գլոբալ և տարածաշրջանային զարգացումների արդի անորոշությունների ու ռիսկերի պայմաններում խիստ կարևորվում են հատկապես ՀՀ իրական հատվածի կազմակերպությունների դրամական հոսքերի հաշվառման, վերլուծության, պլանավորման և վերահսկման տեսական դրույթների և գործնական գործիքների կատարելագործման հարցերը արտադրական կազմա-

կերպությունների շուկայական արժեքը բարձր մակարդակի հասցնելու համար, ինչը հաստատում է ուսումնասիրության **արդիականությունը**:

Հետազոտության նպատակը տնտեսական վերլուծության տեսական դրույթների և մեթոդական գործիքների կատարելագործման և գործնական առաջարկությունների մշակումն է ուղղված արտադրական կազմակերպությունների դրամական ակտիվների կառավարման համակարգի տեղեկատվական և վերլուծական աջակցության որակի բարձրացմանը՝ հաշվի առնելով ֆինանսական հաշվետվությունների ազգային և միջազգային ստանդարտները:

Մեթոդաբանությունը: Հետազոտության իրականացման համար տեսա-մեթոդական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան դասական գիտնականների և ժամանակակից հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների կողմից մշակված և կիրառվող ստանդարտները, մեթոդական բնույթի փաստաթղթերը:

Հոդվածի **գիտական նորույթը** ներառում է դրամական միջոցների հոսքերի տնտեսական վերլուծության մեթոդական գործիքների կատարելագործում՝ արտադրական կազմակերպության գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության կառավարման համակարգի տեղեկատվական աջակցության որակը բարելավելու համար:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունը: Աշխատանքի գործնական նշանակությունը բնութագրվում է առաջարկվող մեթոդական զարգացումները հարմարեցնելու և օգտագործելու հնարավորությամբ, որոնք ունեն համընդհանուր բնույթ, տարբեր արտադրական ընկերությունների համար:

Բանալի բառեր. դրամական հոսք, վերլուծություն, պլանավորում, հիմնական, ֆինանսական և ներդրումային գործունեություն, դրամական հոսքերի հայեցակարգ, տեղեկատվական հիմք, ֆինանսական կայունություն, վճարունակություն, օպտիմալացում:

РЕАЛИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ УПРАВЛЕНИЯ ДЕНЕЖНЫМИ ПОТОКАМИ В ПРОИЗВОДСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЯХ

Карен Армоевич Нерсисян

Аннотация. В условиях нынешней неопределенности и рисков глобальных и региональных событий особенно важны вопросы совершенствования теоретических положений и практических инструментов учета, анализа, планирования и контроля денежных потоков организаций реального сектора РА с целью повышения рыночной стоимости производственных предприятий, чем и обуславливается **актуальность исследования**.

Цель исследования: совершенствование теоретических положений и методического инструментария экономического анализа и разработка практических реко-

мендаций, направленных на повышение качества информационно-аналитического обеспечения системы управления денежными активами производственных организаций с учетом стандартов национальных и международных финансовых отчетов.

Методология: теоретической и практической основой исследования послужили труды отечественных и зарубежных классических ученых и современных исследователей, стандарты, разработанные и применяемые международными организациями, методические документы.

Научная новизна статьи заключается в совершенствовании методического инструментария экономического анализа денежных потоков для повышения качества информационного обеспечения системы управления операционной, инвестиционной и финансовой деятельностью производственной организации.

Практическое применение полученных результатов. Практическая значимость работы характеризуется возможностью адаптации и использования предлагаемых методических разработок, имеющих универсальный характер, для различных предприятий-производителей.

Ключевые слова: денежный поток, анализ, планирование, основная финансово-инвестиционная деятельность, концепция денежных потоков, информационная база, финансовая устойчивость, платежеспособность, оптимизация.

THE REALISTIC ANALYSIS OF CASH FLOW MANAGEMENT IN MANUFACTURING ORGANIZATIONS

Karen Armo Nersisyan

Abstract. In the context of the current uncertainty and risks of global and regional events, the issues of improving the theoretical provisions and practical tools for accounting, analysis, planning and control of cash flows of organizations in the real sector of the Republic of Armenia are especially important in order to increase the market value of production, which determines the **relevance of the study**.

The purpose of the study is to improve the theoretical provisions and methodological tools of economic analysis and develop practical recommendations aimed at improving the quality of information and analytical support for the cash asset management system of production organizations, taking into account the standards of national and international financial reporting.

Methodology: the theoretical and practical basis of the study was the works of domestic and foreign classical scientists and modern researchers, standards developed and applied by international organizations, and methodological documents.

The scientific novelty of the article lies in improving the methodological tools for economic analysis of cash flows to improve the quality of information support for the management system of the operating, investment and financial activities of a production organization.

Practical application of the obtained results. The practical significance of the work is characterized by the possibility of adaptation and use of the proposed methodological developments, which are universal in nature, for various manufacturing enterprises.

Key words: cash flow, analysis, planning, main financial and investment activities, cash flow concept, information base, financial stability, solvency, optimization.